— Սատանան գիտէ, թէ աղջիկը ինչու լաց կլինի...

Մըհէն, ինչպէս առաջ ես մտածում էի, այնքան յիմար չէր. նա երեւաց ինձ խիստ ծածկամիտ մի մարդ: Որովհետեւ որքան ես աշխատեցի նրանից դուրս քաշել մի խօսք, թէ ի՞նչ նպատակ ունէր նրա թափառելը մի օր այստեղ, միւս օր այնտեղ, — նա ոչինչ չյայտնեց, տոեց միայն մի քանի արհամարհական պատասխաններ, ասելով. — «Եթէ շատ բան գիտենաս՝ շուտ կպառաւես»:

Առաջին իջեւանում, ուր ժամադիր էր եղած Ասլանը ինձ սպասելու, նրան չգտանք: Դա մի փոքրիկ հայաբնակ գիւղ էր քրդերի հետ խառը: Բայց երբ մօտեցանք գիւղին, մի մարդ դուրս եկաւ իմ առաջ, երեւում էր, որ նա մեզ սպասում էր:

— Ինչպէ՞ս է քո անունը, — հարցրուց նա:

— Ֆարհատ:

Նա հանեց իր ծոցից մի կնքած թուղթ եւ տոեց ինձ: Նրա մէջ գրած էին այս խօսքերը.

«Ֆարհատ, մի դէպք առիթ տոեց ինձ շեղոիլ այն ճանապարհից, որ ուղղակի տանում է դէպի Վան: Ներիր, որ չկարողացայ սպասել քեզ: Այս մարդուն պատոիրած եմ, որ քեզ ինձ մօտ բերէ: Նա գիտէ իմ տեղը: Ասլան»:

Թուղթը կարդալուց յետոյ այն մարդը հարցրուց.

— Եթէ այստեղ հանգստանալու միտք չունէք, ես այս րոպէիս էլ պատրաստ եմ ձեզ առաջնորդելու:

Այս տղամարդը հագնուած էր բոլորովին քրդի ձեւով, եւ եթէ նա հայերէն չխոսէր, ես նրան քուրդ պիտի կարծէի: Ձէնքերը նոյնպէս քրդի էին՝ երկար նիզակը ձեռին, մի զոյգ ատրճանակներ գօտիումը խրած, ահագին երկաթապատ վահանը ուսին գցած եւ կեռ սուրը կողքից քարշ տոած:

Նա սկսեց քրդերէն խօսել Մըհէի հետ: Երեւում էր, երկուսն էլ ճանաչում էին միմեանց:

Ինձ էլ ծանօթ երեւաց այն հսկայ տղամարդի դէմքը, որպէս թէ մի անգամ պէտք է տեսած լինէի նրան: Իսկոյն մտաբերեցի, որ դա այն երկու զէյթունցի տղամարդերից մէկն է, որոնց ես տեսայ արաբական մինարեթում, այն գիշերը, երբ առաջին անգամ հանդիպեցայ Կարօյին: Այժմ հասկացայ, թէ ինչո՞ւ Ասլանը փոխել էր իր ճանապարհի ուղղութիւնը. երեւի, զէյթունցին նրան մի անակնկալ բան հաղորդած պէտք է լինէր, որ առիթ էր տոել նրան թողնել ուղղակի Վան գնալը: